ՔՆՆԱՐԿՎԵԼ ԵՆ ՓԱՍՏԱԲԱՆԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

10.05.2016 19:11

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատում կազմակերպվել է «Դեոնթոլոգիա և մասնագիտական կարգավիճակ (Վստահորդների հարաբերությունները)» թեմայով վերապատրաստման դասընթաց: Դասընթացը վարել է փաստաբան, ի.գ.թ. Կարեն Սարդարյանը:

Փաստաբաններին են ներկայացվել փաստաբան-վստահորդ հարաբերություններին վերաբերող փաստաբանի վարքագծի կանոնները, քննարկվել են այդ հարաբերություններից բխող վերջին ժամանակահատվածի կարգապահական գործերը և ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի կողմից կայացված՝ փաստաբաններին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումները:

Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.7.2 ենթակետում սահմանված ձեռնհասության ընդհանուր սկզբունքի համատեքստում հանձնարարության կատարման փուլում փաստաբանի գործողություններին ներկայացվող էթիկական պահանջներին, մասնավորապես՝ փաստաբանի պարտականությունը՝ ժամանակին, գիտակցաբար և ջանասիրաբար խորհուրդ տալ և պաշտպանել իր վստահորդին և հանդես գալ նրա անունից:

Մասնակիցները քննարկել են մասնագիտական գործունեության բնույթին, վստահորդների հետ շփման առանձնահատկություններին և առհասարակ հասարակության մեջ փաստաբանի դերին վերաբերող հարցեր:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })